

Հինգ բան, որ պետք է իմանալ Կալիֆոռնիա նահանգի վճարովի ընտանեկան արձակուրդի մասին

1. **Դուք կարող եք ունենալ ութ շաբաթվա աշխատավարձի մասնակի փոխհատուցում ստանալու իրավունք:**
   Կալիֆոռնիա նահանգի վճարովի ընտանեկան արձակուրդը (California Paid Family Leave, PFL) յուրաքանչյուր 12 ամիսը մեկ աշխատողներին տրամադրում է մինչև 8 շաբաթ մասնակի աշխատավարձի փոխհատուցում: Ձեր PFL ժամանակահատվածը կարելի է բաժանել և պարտադիր չէ ամբողջը միանգամից վերցնել:

2. **Սա ձեր գումարն է**
   PFL նպաստների համար ֆինանսավորումը ստացվում է Կալիֆոռնիա նահանգի հաշմանդամության պետական ապահովագրությունից, որը մեզանից շատերի կողմից վճարվող հարկ է (աշխատավարձերի վճարման անդորրագրերի մեծ մասում նշվում է որպես «CASDI»): Սա ձեր գումարն է, այլ ոչ թե պետական սուբսիդիա: Քաղաքացիության և ներգաղթի կարգավիճակները չեն ազդում իրավասության վրա:

3. **Դուք կարող եք ստանալ ձեր աշխատավարձի մոտավորապես 60-ից 70 տոկոսը:**
   Եթե վերջին 5-18 ամիսների ընթացքում վճարել եք Կալիֆոռնիա Նահանգի Հաշմանդամության Պետական Ապահովագրության հարկերը, ապա իրավասու կլինեք ստանալ ձեր աշխատավարձի 60-ից 70 տոկոսը: Կարող եք հաշվարկել ձեր շաբաթական նպաստի գումարը՝ օգտագործելով Disability Insurance and PFL Calculator (edd.ca.gov/PFL Calculator) հաշվիչը:

4. **Սա միայն նորածնի հետ կապ հաստատելու համար չէ**
   Հարկավոր է արձակուրդը վերցնել երեխայի՝ ընտանիքին միանալուց հետո 12 ամսվա ընթացքում: Կարող եք PFL-ից օգտվել ընտանիքի ծանր հիվանդ անդամին (երեխա, ծնող, կնոջ կամ ամուսնու ծնող, պապիկ կամ տատիկ, թոռնիկ, քույր կամ եղբայր, ամուսին կամ գրանցված քաղաքացիական գործընկեր) խնամելու համար: Կարող եք PFL-ից օգտվել նաև ընտանիքի անդամի՝ (ամուսին, գրանցված քաղաքացիական զուգընկեր, ծնող կամ երեխա) արտասահմանում զինվորականի աշխատանքով պայմանավորված որակավորման միջոցառմանը մասնակցելու համար:

5. **Այն արդարացնում է իրեն**
   PFL- ի դիմումները պետք է ներկայացվեն անհրաժեշտ փաստաթղթերով հանդերձ, իսկ դիմումների մշակումը կարող է տևել քանի շաբաթ: Վերցրեք այն ժամանակը, որն անհրաժեշտ է կարևոր պահերին տեղում լինելու համար:

CALIFORNIA PAID FAMILY LEAVE
moments matter.

EDD Employment Development Department
State of California

Ավելին իմանալու համար այցելեք
CaliforniaPaidFamilyLeave.com

EDD-ն հավասար հնարավորությունների գործատու- ծրագիր է: Ըստ պահանջի օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ծառայությունների, օգնության և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն՝ զանգահարելով 1-866-490-8879 (ձայնային) հեռախոսահամարով: TTY օգտագործողներին խնդրում ենք զանգահարել Կալիֆոռնիա նահանգի Կոմուտատորային ծառայության (California Relay Service) 711 հեռախոսահամարով: